

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/2

2 մայիսի 2012թ.

Քննարկվեց «Գ.Դիշլանյան և ընկերներ» ՍՊԸ 19.04.2012թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.03.2012թ. թիվ 1104026 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 28.03.2012թ. թիվ 1104026 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասության սահմաններում «Գ.Դիշլանյան և ընկերներ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է ակցիզային դրոշմանիշների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.07.2002թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 30.03.2012թ-ին կազմվել է թիվ 1104026 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով արձանագրվել է, որ «Գ.Դիշլանյան և ընկերներ» ՍՊԸ-ին պատկանող ք.երևան, Սարի Թաղ 12 փող., 2-րդ տուն հասցեում գործող խանութում վաճառքի նպատակով առկա էր ենթաակցիզային ապրանք՝ 0.5լ. 40% թնդությամբ 1 շիշ օղի տեղական արտադրության, վաճառքի գնով 1 շիշ արժեքը 600 դրամ: Մեր կողմից կատարվեց համապատասխան գնում, նշված օղին վաճառվեց 1 շիշ 600 դրամով: Կատարված իրավախախտումը համապատասխանում է «ԿՎԿ օրենսգրքի 170/13 հոդվածի հատկանիշներին:

«Գ.Դիշլանյան և ընկերներ» ՍՊԸ տնօրենի գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 13-րդ բաժնի աշխատակիցների կողմից 28.03.2012թ-ին, երեկոյան ժամը 19:00-ին, Սարի Թաղ 12 փող., 2-րդ տուն հասցեում գործող խանութում կատարվել է ակցիզային դրոշմանիշների ստուգում: Այդ օրը, մինչև ստուգողների այցելությունը, խանութում վաճառողուհին կատարել է ցուցադարակների մաքրություն և ճիշտ չի տեղադրել օղիների տակի գնապիտակները՝ շփոթելով 0.25լ տարողության օղու գնապիտակը, 0.5լ տարողության օղու գնապիտակի հետ, որոնք գտնվում էին կողք-կողքի: Ստուգող անձինք, ստուգման ընթացքում նկատելով նշված անհամապատասխանությունը, արձանագրել են այն: Չուզենալով լսել իմ բացատրությունները, նրանք հեռացել են: 30.03.2012թ-ին ինձ կանչել են բաժին, որտեղ գտնվելով շփոթված և նյարդային վիճակում ստորագրել եմ ակտը, ակնկալելով, որ բողոքարկելու եմ:

Ես չեմ վաճառել 0.5լ տարողության օղի 600 դրամով, քանի որ 0.5լ տարողությամբ ամենա էժան օղին խանութ է առաքվում 700 դրամով: Բացի այդ, ստուգման ակտում նշված չէ գնված օղու անվանումը և առկա չէ ՀԴՄ կտրոնը, որը տրամադրվում է վաճառքի դեպքում:

Ելնելով վերոգրյալից դիմումատուն խնդրում է անվավեր ճանաչել «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.03.2012թ. թիվ 1104026 ստուգման ակտը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Գ.Դիշլանյան և ընկերներ» ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական

մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում ընկերության նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով սահմանված է, որ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Քննարկման ընթացքում <Գ.Դիշլանյան և ընկերներ> ՍՊԸ տնօրենը պնդեց, որ ստուգման ընթացքում ընկերության ք.Երևան, Սարի Թաղ 12 փող., 2-րդ տուն հասցեում գործող խանութից 0.5լ տարողությամբ 1 շիշ օղի 600 դրամով չէր կարող գնվել և չի գնվել, քանի որ նույն տարողությամբ ամենա էժան օղին խանութ է առաքվում 700 դրամով:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե առկա են արդյոք ապացույցներ, որոնք հիմնավորում են ստուգման ակտում հիշատակված 0.5լ տարողությամբ 1 շիշ օղին 600 դրամով գնված լինելու հանգամանքը, որևէ սպառիչ պատասխան չտրվեց:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեն ստուգման ակտով արձանագրված խախտումը, մասնավորապես՝ <Գ.Դիշլանյան և ընկերներ> ՍՊԸ խանութից 600 դրամով 0.5լ տարողությամբ 1 շիշ օղի գնված լինելու հանգամանքը: Մասնավորապես, ստուգման ակտում նշված չէ գնում կատարած անձի տվյալները, գնված օղու անվանումը, դրա վրա փակցված դրոշմանիշի տվյալները: Բացի այդ, գործում առկա չէ ապրանքի մանրաձախ վաճառքի դիմաց տրվող ՀԴՄ կտրոնը:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի և <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ը ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.03.2012թ. թիվ 1104026 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ